

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

ԲՅՈՒՋԱՆԻ ՍՆԿԻՆԱՋՅԱՆ

Արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի մի զգալի մասը գտնվում է արդյունաբերության արդյունահանող ճյուղերում (վառելիք, հանքալիճ և ոչ հանքային հումք արդյունահանող և այլն), ուր թողարկվող արտադրանքն առավել ֆոնդատար է՝ 1977 թ. հունվարի 1-ի դրությամբ ամբողջ արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի 4,2%-ը բաժին էր ընկնում նավթի արդյունահանմանը, 0,6%-ը՝ գազի արդյունաբերությանը, 5,4%-ը՝ ածխարդյունաբերությանը, մոտ 3%-ը՝ սև մետաղագործության լեռնահանքային արդյունաբերությանը, 5,7%-ը՝ շինանյութերի արդյունաբերությանը՝ և այլն: Դրա հետ մեկտեղ այս ճյուղերին բաժին էր ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի միայն 10%-ը: Դրա հետևանքով արդյունաբերության արդյունահանող ճյուղերում արտադրանքի ֆոնդատարությունը 2—3 անգամ գերազանցում էր մշակող ճյուղերի արտադրանքի ֆոնդատարությանը (աղյուսակ № 1):

Աղյուսակ № 1

Արտադրանքի ֆոնդատարությունը արդյունաբերության առանձին ճյուղերում
(1 ուրլի արտադրանքին ընկնող հիմնական արտադրական ֆոնդերը, ուրլիներով)՝

Արդյունաբերության մշակող ճյուղեր		Արդյունաբերության արդյունահանող ճյուղեր							
Հանքագործություն	Սև մետաղագործություն (առանց հանքաքարի և գազի հանքանյութի)	Սև մետաղագործության ֆոնդատարություն	Գունավոր մետաղագործություն և արհեստական շինանյութեր	Սնունդի արդյունահանում	Նավթի արդյունահանում	Գազի արդյունահանում	Պարզ աղյուսակային արդյունահանում	Տեղի արդյունահանում	Լեռնահանքային արդյունահանում
0,7	0,8	2,4	2,7	1,2	3,5	2,2	1,3	1,5	

Հենդերի արտադրություններն արտադրության այլ միջոցների հետ մեկտեղ արդյունահանող արդյունաբերության մեջ հանդես են գալիս աշխատանքի միջոցի և աշխատանքի առարկայի տեսքով: Չնայած դրան, արտադրության այս կարևորագույն միջոցները չեն մտնում արտադրական ֆոնդերի կազմում: Այդ կապակցությամբ ուշադրության և հավանության են արժանի այն տնտեսագետների հանձնարարականները, որոնցում առաջարկվում են բնական ռեսուրսները ևս զննատեղ ու հաշվառել. ներառելով դրանք միաժամանակ արտադրական ֆոնդերի կազմում:

2 «Народное хозяйство СССР в 1975 г.», М., 1976, էջ 59.

3 Աղյուսակը կազմված է հետևյալ աշխատությունների հիման վրա՝ Ю. В. Яковец, О закономерностях формирования и динамики цен минерально-сырьевого рынка стран СЭВ (Тезисы к докладу на международной конференции в Будапеште. Ленинградский горный институт, 1967), «Экономические проблемы горнодобывающей промышленности», М., 1972, էջ 68.

Ինչպես ժողովրդական տնտեսության, այնպես էլ արդյունաբերության և դրա արդյունահանող ճյուղերի հիմնական արտադրական ֆոնդերը մեր ներկրի տնտեսական պոտենցիալը կանխորոշող հիմնական գործոնն են: Եթե 9-րդ հնգամյակի սուրճներին և Երկրի ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերն աճեցին 146 %-ով, ապա արդյունաբերության մեջ՝ 151 %-ով: Արդյունաբերության հիմնական ֆոնդերի աչքիսի առաջանցիկ աճ բնորոշ է նաև առավել երկարատև ժամանակաշրջանի համար: Այսպես, վերջին 35 տարիների ընթացքում (1940—1975)՝ արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերն ավելացել են 16,4 անգամ, իսկ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ՝ միայն 9,14 անգամ⁴:

Մինչև դարի վերջը մեր երկրում ածխի արդյունահանումը կավելանա մոտ 3, գազինը՝ 7,8, սև մետաղներինը՝ 2,6 անգամ, իսկ նավթի հանույթը կկրկնապատկվի: Այսպիսի պայմաններում առաջել առաջանցիկ տեմպերով կաճեն նաև այդ և հանքային ու ոչ հանքային հումք արդյունահանող մյուս ճյուղերի հիմնական արտադրական ֆոնդերը և դրանց տեսակարար կշիռն ամբողջ արդյունաբերության մեջ:

Արդյունաբերության արդյունահանող ճյուղերի արտադրանքի ծավալի ավելացումն ինչպես մոտիկ ապագայում, այնպես էլ հեռանկարում ի տարբերություն արդյունաբերության այլ ճյուղերի, հիմնականում կիրականացվի նոր հանքավայրեր յուրացնելու, նոր ձեռնարկություններ կառուցելու, արդյունահանող գործող ձեռնարկություններն ընդլայնելու ուղիով, այսինքն՝ նոր հողորոշություններ ստեղծելու և աշխատողներ ընդգրկելու միջոցով: Էքստենսիվ ուղիով այդ ճյուղերի հետագա զարգացումը, ընդերքից արդյունահանվող հումքի բնական պայմանների վատանալու հետ մեկտեղ, բացասաբար կանդառնա հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքի, դրանց օգտակործման արդյունավետության, վերարտադրության տեմպերի և այլնի վրա:

Ամբողջ արդյունաբերության և դրա արդյունահանող ճյուղերի հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքի հետազոտումից հետևում է, որ, ի տարբերություն ամբողջ արդյունաբերության, և հատկապես նրա մշակող ճյուղերի, արդյունահանող արդյունաբերության մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում կառուցվածքների և փոխանցող հարմարանքների արժեքը (աղյուսակ № 2):

Այսպես, եթե ամբողջությամբ արդյունաբերության մեջ կառուցվածքները կազմում են հիմնական արտադրական ֆոնդերի 19,3 %-ը, ապա նավթարդյունահանող, գազի և ածխարդյունաբերության ճյուղերում դրանց տեսակարար կշիռը հասնում է համապատասխանաբար 69,6, 47,7 և 59,4 %-ի: Սև և գունավոր մետաղագործության լեռնահանքային արտադրություններում այն տատանվում է 35—55 %-ի սահմաններում:

Արդյունահանող արդյունաբերության ճյուղերում հիմնական արտադրական ֆոնդերի ամբողջ արժեքի շուրջ 2/3-ը բաժին է ընկնում դրա պասսիվ մասին՝ շենքերին, կառուցվածքներին և փոխանցող հարմարանքներին, այսինքն հիմնական ֆոնդերի այն տարրերին, որոնք պայմաններ են ստեղծում արտադրական պրոցեսի իրականացման համար: Արդյունահանող արդյունաբե-

⁴ «Народное хозяйство СССР за 60 лет». М., 1977, էջ 188.

Աղյուսակ № 2

Արդյունաբերական հիմնական արտադրական ֆոնդերի կառուցվածքը
1977 թ. հունվարի 1-ի դրությամբ (տոկոսներով):

Արդյունաբերության ճյուղեր	Արդյունաբերական ֆոնդերի, լիցանային ֆոնդերի, ինքնակառուցման ֆոնդերի և արտադրական ֆոնդերի ընդամենը	Ա յ դ թ Վ ու մ							
		Հիմնական	Կառուցված	Վերականգնողական	Ստեղծման	Ստեղծման	Ստեղծման	Ստեղծման	Ստեղծման
Ամբողջ արդյունաբերությունը	100	29,4	19,3	11,4	7,8	27,1	1,2	2,1	1,7
Նավթարդյունահանող	100	2,8	69,6	15,5	1,5	8,8	0,6	0,9	0,3
Գազի արդյունաբերություն	100	10,5	47,7	21,2	2,1	16,0	0,6	1,7	0,2
Ածխարդյունաբերություն	100	11,6	59,4	3,6	2,5	18,4	0,8	2,7	1,0
Շինանյութերի արդյունաբերություն	100	38,4	19,5	4,8	2,5	30,6	0,6	2,6	1,0
Սև մետաղագործություն	100	29,4	19,0	6,8	3,7	36,3	0,6	3,3	0,9
Այգ և թվում լեռնահանքային արդյունաբերություն	100	21,8	36,2	5,4	2,7	18,0	—	7,2	8,7
Գունավոր մետաղագործություն	100	30,5	25,5	9,0	31,5	—	—	3,0	0,5

րության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ տարիների ընթացքում արդյունահանող ձեռնարկության հզորությունը պահպանելու համար անհրաժեշտ է լինում շահագործման ոլորտ ընդգրկել հանքավայրերի նոր տեղամասեր և անգամ ամբողջությամբ նոր հանքավայրեր: Դա պահանջում է լրացուցիչ կապիտալ ներդրումներ, հատկապես լեռնային փորվածքների, կառուցվածքների, փոխանցման հարմարանքների և այլնի ստեղծման համար: Այսպիսի պայմաններում արդյունահանող ձեռնարկություններում հումքի արդյունահանման համարյա կայուն ծավալի դեպքում հիմնական ֆոնդերի արժեքը տարեցտարի մեծանում է, քանի որ նոր գործարկվածի համեմատ դուրս գրվող հիմնական ֆոնդերի արժեքը որպես կանոն ավելի փոքր է լինում: Այս ամենը հանգեցնում են արդյունահանվող հումքի (նավթ, գազ, ածուխ, հանքային և ոչ հանքային հումք և այլն) միավորի ծախսերի մեջ առարկայացած աշխատանքային ծախսումների մասի ավելանալուն և համապատասխանորեն կենդանի աշխատանքային ծախսերի նվազելուն: Արդյունահանող արդյունաբերության ճյուղերում արտադրանքի արտադրության ծախսերի կառուցվածքի փոփոխության այսպիսի միտումն ուղեկցվում է արդյունահանվող հումքի տեսակարար լրիվ ծախսերի (1 տոննայի կամ 1 խոր. մ. ինքնարժեքի) մեծացումով, որը հետևանք է ինչպես առարկայացած, այնպես էլ կենդանի աշ-

⁵ Աղյուսակը կազմված է հետևյալ ժողովածուների և աշխատությունների հիման վրա՝ «Народное хозяйство СССР за 60 лет», էջ 188, «Народное хозяйство СССР в 1975 г.», էջ 220, «Экономика черной металлургии», М., 1975, էջ 138, Т. А. Слепнева, Н. Т. Глушкова, Е. Г. Гинзбург, Экономика цветной металлургии, М., 1976, էջ 84;

⁶ В. Н. Костяк, Фондоотдача в цветной металлургии, М., 1969, էջ 17—18.

խատտնքային ծախսերի բացարձակ աճի: Այս դեպքում դիտվում է վերջինի համեմատ առարկայացած աշխատանքային ծախսերի (հատկապես հիմնական արտադրական ֆոնդերի ամորտիզացիայի տեսքով) առաջանցիկ աճի միտում:

Ինչպես հայտնի է, հիմնական ֆոնդերի առանձին խմբերը ձևավորվում են բնական, տնտեսական և տնտեսական գործոնների ազդեցության ներքո: Արդյունահանող արդյունաբերության ճյուղերում հիմնական ֆոնդերի կառուցվածքի վրա առավել մեծ է բնական գործոնների ազդեցությունը, բնական գործոնների՝ հիմնական ֆոնդերի կառուցվածքի վրա ունեցած ազդեցությունն անմիջականորեն դրսևորվում է հատկապես դրանց պասսիվ մասի (շինքերի, կառուցվածքների և փոխանցող հարմարանքների) մեծության վրա:

Արդյունաբերության արդյունահանող ճյուղերի համար տեխնոլոգիական կառուցվածքում առաջադիմական տեղաշարժերը կարևորագույն նախապայման են հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացման համար: Այդ ճյուղերում հիմնական ֆոնդերի գերակշռող բաժինը կազմում է պասսիվ մասի ֆոնդերի արժեքը: Դրանք ներառում են հանքահորերի, կապիտալ հորատանքների, ընդգետնյա, վերգետնյա և հատուկ նշանակության կառուցվածքների, բովանգների, բաց հանքերի կառուցման և այլնի արժեքը, որոնք տվյալ հանքավայրի (կամ հանքավայրի տեղամասի) օգտակար հանածոների արդյունահանումից հետո այլ նպատակներով, անգամ դրանց ֆիզիկապես պիտանիության դեպքում, սրակտիկորեն չեն օգտագործվում (միայն բացառիկ դեպքերում դրանց մի շնչին մասը օգտագործվում է ընդգետնյա պահեստարանների և այլ նպատակներով): Այդ ֆոնդերի ծառայության ժամկետը հիմնականում սահմանափակվում է հանքավայրում (կամ հանքավայրի տեղամասում) եղած օգտակար հանածոների պաշարներով և դրանց արդյունահանման ինտենսիվությամբ: Այն հիմնական ֆոնդերի տեսակարար կշիռը, որոնց ծառայության ժամկետը կախված է հանքավայրի (կամ դրա տեղամասի) շահագործման ժամկետից, բավականին մեծ է: Այն հասնում է արդյունահանող արդյունաբերության հիմնական ֆոնդերի արժեքի 60—80%-ին⁷:

Հետևապես, նոր հանքավայրերի (կամ դրա տեղամասերի) շահագործման եղանակի և համակարգի (սխտեմի) ընտրության ժամանակ թույլ տրված բացթողումները երկար ժամանակ (հանքավայրի դոյատևության ամբողջ ժամանակաշրջանում, եթե հետագայում այն ուղղել հնարավոր չէ) բացասաբար են անդրադառնում արդյունահանող ձեռնարկության տեխնիկատնտեսական ցուցանիշների, այդ թվում նաև հիմնական ֆոնդերի արդյունավետության վրա: Չնայած դրան, պրակտիկայում դեռևս արդյունաբերության այս ճյուղերի հիմնական ֆոնդերի արդյունավետությունը հետադոտելիս այս ուղղությամբ ուսումնասիրություններ չեն կատարվում:

Արդյունահանող արդյունաբերության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հիմնական արտադրական ֆոնդերի արժեքային վերարտադրու-

7 В. А. Михальская. Производственные фонды и резервы, улучшение их использования в угольной промышленности (автореферат канд. диссертации), Донецк, 1969, էջ 9.

թյունը, որպես կանոն, չի համընկնում դրանց, որպես սպառողական արժեքի, վերարտադրության հետ: Լայն տարածում գտած այն թյուր կարծիքը, թե հիմնական ֆոնդերի սպառողական արժեքը դրանց շահագործման ընթացքում չի փոփոխվում կամ փոփոխվում է այնքան չնչին չափով, որ գործնական հաշվարկներում կարելի է անտեսել, տեսականորեն հիմնադրվել է և ապակողմնորոշող: Այն առավել ցայտուն դրսևորվում է արդյունահանող արդյունաբերության ճյուղերում: Այսպես, ընդերքի հարստություններն արդյունահանող ձեռնարկություններում հիմնական ֆոնդերի մի ղգալի մասի (լեռնային փորվածքներ, հորատանցքեր և այլն) արժեքային վերարտադրությունը, ինչպես նշվեց, չի համապատասխանում դրանց «սպառողական արժեքի» վերարտադրությանը: Ընդերքի շահագործվող այն տեղամասերում, որտեղից օգտակար հանածոն հիմնականում արդյունահանված է, հիմնական արտադրական ֆոնդերի այդ գերակշռող մասի (լեռնային փորվածքներ, հորատանցքեր և այլն) սպառողական արժեքը ձգտում է զրոյի: Հավասարամեծ արժեքի, սակայն մեկ այլ տեղամասում համանման ֆոնդերի ստեղծումը դեռ չի վկայում համազոր սպառողական արժեքի վերականգնում: Այդ իսկ պատճառով, եթե արդյունաբերության վերամշակող ճյուղերում, գործնական հաշվարկների պարզեցման նպատակով, այդպիսի խզումը երբեմն կարելի է հիմնական ֆոնդերի սպառողական արժեքի վերականգնման տեսանկյունից անտեսել, ապա արդյունահանող արդյունաբերության ճյուղերում հիմնական ֆոնդերի վերարտադրությունն անհրաժեշտ է դիտարկել դրանց արժեքային և սպառողական արժեքի տեսանկյուններից՝ փոխկապվածության մեջ⁶:

Արտադրության ոլորտում հիմնական արտադրական ֆոնդերի մաշվածքի արժեքը, արտացոլելով դրանց սպառման մեծությունը, փոխանցվում է թողարկվող արդյունքի արժեքի մեջ և վերականգնվում վերջինիս իրացումից հետո՝ ամորտիզացիոն ֆոնդի ձևով: Վերջինը պետք է դիտել որպես հիմնական արտադրական ֆոնդերի վերարտադրության աղբյուր այն չափով, որքանով որ արտադրական սպառման հետևանքով այդ ֆոնդերը կորցրել են իրենց արժեքը: Արդյունաբերության արդյունահանող ճյուղերի արտադրանքի արտադրության ծախսերում ամորտիզացիոն հատկացումների տեսակարար կշիռը անհամեմատ բարձր է, ինչպես վերամշակող ճյուղերի, այնպես էլ ամբողջությամբ արդյունաբերության համապատասխան ցուցանիշից (աղյուսակ № 3):

Շարքից դուրս եկող հիմնական ֆոնդերի լրիվ փոխհատուցումը, իսկ ապա նաև դրանց վերարտադրությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ ճիշտ են որոշված ամորտիզացիոն հատկացումների չափերը: Հայտնի է, որ ներկայումս արդյունաբերության մեջ կիրառվում է հիմնական ֆոնդերի նորմատիվային ծառայության ժամկետի վրա քաղավորվող ամորտիզացիայի հավասարաչափ հաշվարկման մեթոդը: Սակայն այս մեթոդից

⁶ Հիմնական ֆոնդերի վերարտադրության պրոբլեմները հետազոտելիս այդ հարցերի քննարկման հանդիպում ենք В. Г. Захаров, Особенности воспроизводства основных фондов в условиях научно-технической революции, М., 1972, էջ 7—22, А. А. Араке-ляни и др., Воспроизводство основных фондов в СССР, М., 1972, էջ 22—42, Ю. И. Любимцев, Цикл воспроизводства и амортизация основных фондов, М., 1973, էջ 6—25 և այլ գրքերում:

բացառություն է կազմում արդյունահանող արդյունաբերության ճյուղերի հիմնական ֆոնդերի գերակշռող մասի ամորտիզացիայի հաշվարկման կարգը: Նավթ և զագ արդյունահանող արդյունաբերության յուրահատկություններին մեկն էլ այն է, որ նավթի և գազի հորատանցքերի արժեքի լրիվ վերա-

Աղյուսակ № 3

Արդյունաբերական արտադրանքի արտադրության ծախսերի կառուցվածքը արդյունաբերության առանձին ճյուղերում (1975 թ., տոկոսներով)⁹:

Արդյունաբերության ճյուղեր	Ընդհանուր ծախսեր	Նյութական հիմքի վերականգնում	Օբյեկտների կառուցում	Վառելիք	Պայմանագրային	Ամսորստության	Արդյունաբերական արտադրության հիմնական ֆոնդի վերականգնում	Այլ ծախսեր
Ամբողջ արդյունաբերություն	100	64,1	4,3	3,5	2,5	6,4	14,6	4,6
Այդ թվում՝								
Նավթի արդյունահանում	100	—	4,7	1,8	9,2	33,4	7,2	43,7
Ածխի արդյունահանում	100	—	14,2	1,0	4,7	20,8	46,8	12,5
Ներկաթահանքային արդյունաբերություն ¹⁰	100	6,1	18,7	5,4	7,5	21,6	33,1	7,6
Շինանյութերի արդյունաբերություն	100	40,3	5,7	7,2	4,4	10,7	22,8	8,9
Մեքենաշինություն և մետաղամշակում	100	58,1	3,8	1,2	2,0	5,5	23,6	5,8
Թեթև արդյունաբերություն	100	86,3	2,6	0,3	0,6	1,4	8,1	0,7
Սննդի արդյունաբերություն	100	84,5	3,3	1,3	0,5	2,8	5,7	1,9

կանգնման ամորտիզացիան (ռենովացիան) կատարվում է ոչ թե այդ հորատանցքերի շահագործման ամբողջ ժամանակի ընթացքում, այլ որոշակի, կայուն ժամկետում (ներկայումս այն ընդունված է հավասար համապատասխանորեն 15 և 12 տարվա): Այն դեպքում, երբ այդ հորատանցքերի շահագործումը դադարեցվում է (պաշարների սպառման կամ նավթի դեբիտի խիստ անկման հետևանքով) մինչ այդ նորմատիվային ժամկետի լրանալը (անգամ, երբ դրանց պործարկումից անցել է ընդամենը 2—3 տարի) արդեն չգործող այդ հորատանցքերի համար լրիվ վերականգնման ամորտիզացիոն հատկացումները շարունակվում են կատարվել նորմատիվային ամբողջ ժամանակաշրջանում (համապատասխանորեն 15 և 12 տարի): Նթե պարզվում է, որ փորված հորատանցքեր դատարկ է (այսինքն, այդ հորատանցքից նավթ չի արդյունահանվելու), միևնույն է 15 տարվա նորմատիվային ժամկետում դրա լրիվ վերականգնման ամորտիզացիան կատարվում է և մտցվում նավթ արդյունահանող այդ ձեռնարկության ծախսերի մեջ¹¹: Դրա հետ մեկտեղ կան նաև մեծ թվով հորատանցքեր, որոնք գոյատևում են տասնյակ տարիներ, այսինքն զգալիորեն գերազանցում նորմատիվային այդ ժամկետը: Այս դեպքում, ելնելով ժողովրդական տնտեսության մեջ ամորտիզացիոն հատկացում-

⁹ Աղյուսակը կազմված է «Народное хозяйство СССР в 1975 г.» գրքի էջ 230-ի տվյալների հիման վրա:

¹⁰ В. В. Осмоловский, Экономика железорудной промышленности, М., 1967, էջ 208:

¹¹ «Технический прогресс и эффективность воспроизводства основных фондов», М., 1970, էջ 183:

ների պլանավորման, հաշվարկման և օգտագործման կարգի մասին կանոնադրության այն հանձնարարականից, որ լրիվ ու մասնակի վերականգնման համար ամորտիզացիոն հատկացումներ կատարվում են հիմնական ֆոնդերի փաստացի ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում, հիմնական ֆոնդը՝ հորատանցքը, 15 տարվա ընթացքում իր սկզբնական արժեքը լրիվ վերականգնելուց հետո նույնպես շարունակում է ամորտիզացվել և տեղի ունի այսպես կոչված «գերամորտիզացիա»։ Փաստորեն այդ գերամորտիզացիան, որը հետևանք էր նորմատիվային ծառայության ժամկետից հետո հիմնական ֆոնդի արտադրության մեջ մնալու, ձեռնարկության օգուտի մի մասն է, որ սխալ հաշվարկի հետևանքով ամորտիզացիայի տեսքով մտցված է արտագրության ծախսերի մեջ։

Նավթի և դադի հորատանցքերի արժեքի ամորտիզացիայի այս կարգը կատարելագործման կարիք ունի։ Այդ հորատանցքերի արժեքի լրիվ վերականգնման (ռենովացիայի) ամորտիզացիոն հատկացումների նորմայի հաշվարկների ժամանակ պետք է ելնել ոչ թե ամբողջ երկրի համար միջինացված ծառայության նորմատիվային ժամկետից (15 տարի), այլ այն պետք է մասնատել այնպես, որպեսզի առավելագույն չափով մոտ լինի տվյալ նավթաբեր շրջանում (հանքավայրի սահմաններում) հորատանցքերի ծառայության փաստացի ժամկետին։ Հորատանցքերի ծառայության այդ ժամկետը հաշվարկելիս պետք է ելնել նավթաբեր շրջանում նավթի առկա պաշարներից և դրանց շահագործման ինտենսիվությունից։ Այս գործոնների ազդեցությունը պրակտիկայում հաշվի առնելու համար ամբողջ երկրի կտրվածքով ընդունված լրիվ վերականգնման ամորտիզացիոն նորմաները նպատակահարմար է ճշտել համապատասխան կարգավորիչ գործակիցների օգնությամբ։ Նավթաբեր առանձին ռեզիդուներում նավթի հորատանցքերի շահագործման վերաբերյալ փաստացի տվյալների մանրամասն վերլուծության միջոցով այդպիսի գործակիցների հաշվարկումը մեծ դժվարություն չի ներկայացնի։ Իսկ այն դեպքերում, երբ պարզվում է, որ փոքրած հորատանցքերը նավթաբեր չեն, դրանք չպետք է գործարկել։ Այդ դեպքում դրանց արժեքը հիմնական ֆոնդերում հաշվի չի առնվելու և չի ամորտիզացվելու։ Այդպիսի հորատանցքեր փորելու ծախսերը պետք է կատարվեն պետական բյուջեի կամ ադ նպատակով կենտրոնացված կարգով ստեղծվող մեկ այլ հատուկ ֆոնդի հաշվին։

Արդյունահանող արդյունաբերության ճյուղերում հիմնական արտադրական ֆոնդերի վերարտադրությունը դրամական արտահայտությամբ և բնաիրային տեսքով աշխատանքի մաշված միջոցների փոխհատուցումից և վերականգնումից բացի ընդգրկում է նաև տարածականորեն նոր միջավայրում հիմնական ֆոնդերի ստեղծում, որոնք անգամ պարզ վերարտադրության տեսանկյունից բնաիրային տեսքով չեն կրկնօրինակում գոյություն ունեցողին։ Այս դեպքում գործող ձեռնարկությունների ընդլայնումն ու վերակառուցումը, նոր օբյեկտների և լեռնատեխնիկական համալիրների ստեղծումն ու գործարկումը հանգեցնում են առկա հիմնական ֆոնդերի նոր աճի։ Հիմնական արտադրական ֆոնդերի համանման պտույտը իր կնիքն է թողնում նաև արդյունահանող արդյունաբերության ճյուղերում դրանց նորացման վրա։

Արտադրության (առաջին հերթին աշխատանքի) միջոցների նորացման արագ տեմպերը վկայում են տեխնիկայի և արտադրության տեխնոլոգիայի

կատարելագործման ուղղությամբ կատարվող հետազոտություններն արտագրության մեջ ներդրվելու, գիտատեխնիկական առաջընթացի և արտադրության ընդլայնման բարձր տեմպերի մասին:

Հիմնական արտադրական ֆոնդերի ակտիվ մասի նորացման տեմպերը զգալիորեն պայմանավորված են կապիտալ ներդրումների վերարտադրական կառուցվածքով և, առաջին հերթին, դրանց ընդհանուր գումարում արտադրության տեխնիկական վերազինմանը և վերակառուցմանը հատկացվող մասի մեծությամբ:

Աղյուսակ № 4

ՍՍՀՄ արդյունաբերության ճյուղերում կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում գործող ձեռնարկությունների վերակառուցմանը, ընդլայնմանը և տեխնիկական վերազինմանը ուղղված միանվազ ծախսումների տեսակարար կշիռը (տոկոսներով)¹²:

Արդյունաբերության ճյուղեր	1960 թ.	1970 թ.	1975 թ.	1970 թ.
Ընդամենը արդյունաբերության մեջ արտադրական նշանակության օբյեկտներում	55	58	66	67
Այդ թվում՝				
Մեքենաշինություն և մետաղամշակում	77	63	67	69
Ածխարդյունաբերություն	62	85	78	80
Նավթի և գազի արդյունաբերություն	30	50	—	—
Շինանյութերի արդյունաբերություն	41	50	58	61
Սև մետաղագործություն	63	60	70	73
Գունավոր մետաղագործություն				
(կենսահանքային արդյունաբերություն) ¹³	42	45	45	—
Քեմիկատ արդյունաբերություն	52	40	57	61
Սննդի արդյունաբերություն	62	66	68	66

Աղյուսակում ամփոփված տվյալների մեջ խորամուխ չլինելու դեպքում ստեղծվում է այն սխալ տպավորությունը, որ արդյունաբերության արդյունահանող ճյուղերում գործող ձեռնարկությունների վերակառուցմանը, տեխնիկական վերազինմանը և ընդարձակմանն ուղղվող կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը մեծ է մյուս ճյուղերի համապատասխան ցուցանիշից կամ մոտ է դրան: Սակայն իրականում դա այդպես չէ: Բանն այն է, որ արդյունաբերության արդյունահանող ճյուղերի վիճակագրական հաշվետվություններում գործող ձեռնարկությունների վերակառուցմանը և ընդլայնմանն են վերաբրվում գործող հզորությունները պահպանելուն ուղղված կապիտալ ներդրումները: Իսկ դրանց տեսակարար կշիռը արդյունաբերության արդյունահանող ճյուղերում բավական մեծ է: Ածխարդյունաբերության մեջ այն հասնում է ճյուղի արտադրական նշանակության կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալի 60, շինանյութերի արդյունաբերության մեջ՝ ավելի քան 20, սև

¹² Աղյուսակը կազմված է հետևյալ ժողովածուների հիման վրա. «Народное хозяйство СССР в 1970 г.», М., 1971, էջ 485, «Народное хозяйство СССР за 60 лет», էջ 439:

¹³ Միջինացված է 1970—1975 թթ. համար (Т. А. Слепнева, Н. Г. Глушков, Е. Г. Гинзбург, նշվ. աշխ., էջ 128):

և գունավոր մետաղագործության մեջ՝ համապատասխանաբար 19՝ և 25%-ին¹⁴։

Այս հանգամանքը հաշվի առնելով եթե ճշտենք աղյուսակում ամփոփված տվյալները, ապա կարգվի, որ հիմնական ֆոնդերի ակտիվ մասի բարոյական կամ ֆիզիկական մաշված միջոցները նորերով փոխարինելու և արտադրության տեխնիկական վերազինելու միջոցով հիմնական ֆոնդերի նորացման համար 1976 թ. արտադրական նշանակության կապիտալ ներդրումներից ածխարդյունաբերության մեջ ներդրվել է 20, սե մետաղագործության մեջ՝ 54, գունավոր մետաղագործության լեռնահանքային արդյունաբերության մեջ՝ 20—25, շինանյութերի արդյունաբերության մեջ՝ մոտ 41%-ը, այսինքն զգալիորեն ավելի քիչ, քան մեքենաշինության ու մետաղամշակման, թեթև և սննդի արդյունաբերության և այլ ճյուղերում։

Նետեալով, արդյունաբերության արդյունահանող ճյուղերում հիմնական ֆոնդերի նորացումն իրականացվում է հիմնականում նոր շինարարության և առաջին միայն գործող ձեռնարկությունները վերակառուցելու, աշխատանքի մաշված միջոցները նորերով փոխարինելու, մեքենաներն ու սարքավորումները արդիականացնելու ուղիով։ Սակայն, դրանք բոլորն էլ արտացոլելով հիմնական ֆոնդերի վերարտադրության և նորացման օբյեկտիվ պրոցեսը, բնորոշ լինելով մեր էկոնոմիկայի զարգացման արդի փուլին, երբեք չպետք է բացարձակացվեն։ Այդ ուղիներից յուրաքանչյուրը կոչված է ստեղծված որոշակի իրավիճակում լուծելու կոնկրետ խնդիրներ։

Ինչպես կարելի է խուսափել նոր շինարարությունից և հիմնական շենքեր դնել միայն արդյունահանող արդյունաբերության գործող ձեռնարկությունների ընդարձակման և վերազինման վրա, երբ դրանցում արտադրության հետագա ընդարձակումը կարող է սահմանափակվել ինչպես ընդերքում օգտակար հանածոյի առկա պաշարներով, այնպես էլ հանքավայրերի շահագործման լեռնաերկրաբանական պայմաններով։ Նոր շինարարությունը միաժամանակ լուծում է երկրի տարածքում արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխման և հանքահումքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման մի շարք բարդ խնդիրներ։

Սակայն, դրա հետ մեկտեղ, հիմնական ֆոնդերի նորացման և արտադրության արդյունավետության բարձրացման գործում մեծ է գործող ձեռնարկությունների վերակառուցման և արտադրության վերազինման դերը։ Դրա անհրաժեշտությունը թելադրվում է նախ և առաջ արդի փուլում տեխնիկական առաջընթացի բարձր տեմպերով և դրանցով պայմանավորված աշխատանքի միջոցների և արտադրության տեխնոլոգիայի բարոյական մաշման արագացումով։ Արդյունահանող ճյուղերում օգտակար հանածոների հանույթի և դրա նախնական հարստացման ու տարանջատման նոր տեխնոլոգիական պրոցեսների արտադրության մեջ արմատավորումը, փոխադրման առավել կատարյալ արմարանքների ստեղծումը, աշխատանքի մաշված միջոցները նորերով փոխարինելը հնարավոր են դարձնում խուսափել գործող սարքավորումների բարոյական մաշումից, բարձրացնել նախկինում ստեղծված հիմնական արտադրական ֆոնդերի տեխնիկատնտեսական մակարդակը՝ դրանք հասցնելով

¹⁴ Նույն տեղում։

աշխատանքի միջոցների ժամանակակից մակարդակին, նորացման այս ուղու մեղմացման առաջնություններից մեկն էլ պետք է համարել այն, որ նա ապահովում է նաև կապիտալ ներդրումների առավել կատարյալ տեխնոլոգիական կառուցվածք:

Հայաստանի արդյունաբերության, այդ թվում գունավոր մետաղագործության լեռնահանքային արդյունաբերության ճյուղում հիմնական արտադրական ֆոնդերի շարժի վերաբերյալ տվյալների վերլուծումից պարզվում է, որ ինչպես ամբողջ արդյունաբերության մեջ, այնպես էլ այդ ճյուղերում հիմնական ֆոնդերի նորացման զործակիցը 1965—1975 թթ. կայուն չի եղել: Եթե այդ ընթացքում հանրապետության արդյունաբերության մեջ այն տառանվել է 0,061—0,149 սահմաններում¹⁵, ապա լեռնահանքային արդյունաբերության մեջ այդ տատանումն ավելի մեծ է՝ 0,054—0,272: Հանրապետության արդյունաբերության մեջ հիմնական ֆոնդերի նորացումն արդյունք է ինչպես առկա հիմնական արտադրական ֆոնդերի ակտիվ մասի (մեքենաներ, սարքեր և այլն) նորերով փոխարինելու, արտադրության մեջ նոր տեխնոլոգիական պրոցեսներ ներդնելու, այնպես էլ նոր արտադրական օբյեկտներ զործարկելու և գործող արտադրական հզորություններն ընդարձակելու, իսկ լեռնահանքային արդյունաբերության մեջ այն ավելի քիչ է պայմանավորված հիմնական ֆոնդերի ակտիվ մասի նորացումով և հիմնականում արդյունք է նոր հանքարաններ զործարկելու, հանքավայրերի նոր տեղամասեր արդյունաբերական յուրացման նախապատրաստելու:

Հիմնական ֆոնդերի նորացման ինտենսիվության մասին պատկերացում է տալիս հիմնական ֆոնդերի մուտքի և ելքի զործակիցների համադրումը:

Աղյուսակ № 5

Հիմնական արտադրական ֆոնդերի մուտքը և ելքը արդյունաբերության մեջ (տոկոսներով, հիմնական ֆոնդերի արժեքի նկատմամբ)¹⁶:

Արդյունաբերության ճյուղեր	1970 թ.		1974 թ.		1975 թ.	
	Մուտքի զործակից	Ելքի զործակից	Մուտքի զործակից	Ելքի զործակից	Մուտքի զործակից	Ելքի զործակից
ՍՍՀՄ արդյունաբերության մեջ	11,9	1,8	8,6	1,4	8,8	1,6
Այդ թվում՝						
Նավթարդյունահանող արդյունաբերու- թյուն	11,7	1,7	11,3	1,4	10,9	2,0
Դաղի արդյունաբերություն	13,8	1,0	19,7	0,6	19,9	2,2
Ածխարդյունաբերություն	10,1	5,3	3,5	5,4	9,4	4,7
Մետաղաբերական արդյունաբերություն	11,1	3,4	7,4	2,2	7,1	2,7
Հայաստանի արդյունաբերության մեջ	14,9	1,8			6,1	1,4

¹⁵ «Промышленность Армянской ССР», Ереван, 1973, էջ 57, «Народное хозяйство Армянской ССР в 1975 г.», էջ 69:

¹⁶ Աղյուսակը կազմված է հետևյալ ժողովածուների տվյալների հիման վրա՝ «Народное хозяйство СССР в 1970 г.», էջ 169, «Народное хозяйство СССР в 1975 г.», էջ 225, «Промышленность Армянской ССР», էջ 57, «Народное хозяйство Армянской ССР в 1975 г.», էջ 69:

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ինչպես ամբողջ արդյունաբերության մեջ, այնպես էլ նրա արդյունահանող ճյուղերում 1970—1975 թթ. նոր հիմնական ֆոնդերի մուտքի միջին մեծությունը ժամանակի ընթացքում լուծարքի ենթարկված հիմնական ֆոնդերի ելքին գերազանցում է մի քանի անգամ:

Արդյունահանող արդյունաբերության ճյուղերում ամբողջությամբ արդյունաբերության հետ համեմատած ելքի ավելի բարձր մակարդակը (1975 թ. 1,2—2,9 անգամ) վկայում է այդ ճյուղերում հիմնական արտադրական ֆոնդերի առավել արագ պտույտի մասին: Դրա արագացմանը մեծ շահույթ նպաստում է նաև այդ ճյուղերում հիմնական արտադրական ֆոնդերի պասսիվ մասի (կառուցվածքներ, լեռնային փորվածքներ, հատուկ նշանակության շինանյութեր և այլն) արագ պտույտը, որի տեղումնում, ինչպես նշվեց, պայմանավորված է հանքավայրի տեղամասում օգտակար հանածոների պաշարների և դրանց օգտագործման ինտենսիվությամբ: Դա է վկայում նաև այն փաստը, որ 1975 թ. շենքերի ու կառուցվածքների դուրսգրման՝ ելքի գործակիցները (ածխարդյունաբերության մեջ մոտ 3, գաղի արդյունաբերության մեջ՝ 2,5, նավթի արդյունահանման ճյուղերում՝ 1,25 անգամ) գերազանցում են ամբողջությամբ արդյունաբերության մեջ այդ գործակցի ունեցած մեծությունը¹⁷: Միաժամանակ արդյունաբերության մեջ ամբողջությամբ նկատվում է հիմնական արտադրական ֆոնդերի ինչպես գործարկման՝ մուտքի գործակցի, այնպես էլ դուրսգրման՝ ելքի գործակցի, անկման միտում: Դա հետևանք է արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի աճի տեմպի համեմատ ինչպես նոր գործարկվող (մուտքագրվող), այնպես էլ հնացածության և մաշվածության պատճառով լուծարքի ենթարկվող (դուրս դրվող) հիմնական արտադրական ֆոնդերի առաջանցիկ աճի:

Հիմնական արտադրական ֆոնդերի արագ աճի պայմաններում հնացած և մաշված ֆոնդերը ժամանակին դուրս գրելու և նորերով փոխարինելու պրոցեսի դանդաղեցումը հանգեցնում է արտադրության մեջ ֆիզիկական և բարոյական մաշված հիմնական արտադրական ֆոնդերի կուտակման, դրանց «հասակային ծերացման» և խուլընդոտում գիտության և տեխնիկայի արդյունքների ներդրմանն ու արտադրության արդյունավետության բարձրացմանը: Այս տեսակետից դրությունն առավել անմխիթար է արդյունահանող արդյունաբերության ճյուղերում: Եթե հաշվի առնենք, որ ածխարդյունաբերության մեջ մուտքի գործակցի հաշվարկներում նոր գործարկված հիմնական արտադրական ֆոնդերի մոտ 60, շինանյութերի արդյունաբերության մեջ՝ 20, նավթի և գաղի արդյունաբերության մեջ՝ 15—20, գունավոր մետաղագործության լեռնահանքային արդյունաբերության մեջ 25%-ը կոչված են սոսկ պահպանելու արդյունահանող ձեռնարկությունների հզորությունը, ապա այդ ճյուղերում մուտքի և ելքի գործակիցները շատ ավելի փոքր կլինեն, քան վեճակագրական այն տվյալներն են, որ ամփոփված են № 5 աղյուսակում: Այսպես, 1975 թ. ածխարդյունաբերության մեջ մուտքը և ելքը համապատասխանաբար կկազմեն մոտ 3,8 և 1,9, շինանյութերի արդյունաբերության մեջ՝

¹⁷ Հաշվարկված է «Народное хозяйство СССР в 1975 г.» թողածուի էջ 225-ի տվյալների հիման վրա:

մոտ 5,7 և 2,2, նավթարդյունահանող արդյունաբերության մեջ՝ 8,7 և 1,6, դադի արդյունաբերության մեջ՝ 15,2 և 1,8%, միջա այսպիսի ճշտումից հետո արդյունահանող ճյուղերում հիմնական արտադրական ֆոնդերի ինչպես մուտքի, այնպես էլ ելքի մեծությունները, ինչպես տեսնում ենք, ոչ այնքան մեծ չափով են շեղվում ամբողջ արդյունաբերության մեջ այդ ցուցանիշների ունեցած միջին մեծությունից: Եթե հիմնական արտադրական ֆոնդերի դուրս-գրման փոքր ելքը խոստում է այդ արտադրություններում մաշված և հնացած ֆոնդերը նորերով փոխարինելու ցածր տեմպերի և դրանց փաստացի ծառայության երկար ժամկետների մասին, ապա մուտքի ցածր լինելն էլ իր հերթին ցույց է տալիս, որ այդ ճյուղերում հիմնական ֆոնդերի էքստենսիվ ուղիով նորացումը նույնպես շատ դանդաղ է ընթանում: Արդյունահանող արդյունաբերության մեջ այդ երկու ցուցանիշների (ելքի և մուտքի չափի) միաժամանակ ունեցած փոքր մեծությունները անուղղակի վկայում են նաև այն, որ այստեղ տեխնիկական առաջընթացն ավելի դանդաղ է ընթանում, քան արդյունաբերության մյուս ճյուղերում:

Հիմնական արտադրական ֆոնդերի մեջ մեքենաների և սարքավորումների ունեցած ցածր ելքի (օրինակ, վառելիքի արդյունաբերության ճյուղերում մաշվածության և հնացածության պատճառով լուծարքի ենթարկված այդ ֆոնդերը կադմել են դրանց տարեսկզբին ունեցած արժեքի 4,3, շինանյութերի արդյունաբերության մեջ՝ 4,1%-ը և այլն) պայմաններում, երբ դրանց նորացումը հիմնականում ընթանում է էքստենսիվ ուղիով, խորանում է արդյունահանող արդյունաբերության մեջ գործող և նոր կառուցվող ձեռնարկությունների տեխնիկական մակարդակների միջև առկա խզումը:

Այն դեպքում, երբ լեռնահանքային արդյունաբերության մեջ բաց և ստոր-երկրյա լեռնային աշխատանքներում զբաղված մեքենաների, սարքերի և այլնի լրիվ վերականգնման (ռենովացիայի) ամորտիզացիոն նոր նորմաների հիմքում ընկած ծառայության նորմատիվային ժամկետը գտնվում է 3—10 տարվա սահմաններում, նավթի հորատանցքեր փորող մեքենաներին ու սարքերին՝ 3—9, գազի արդյունաբերության մեջ՝ 4—10, իսկ շինանյութեր արդյունահանող ճյուղերում՝ 6,5—14 տարվա սահմաններում, դրանց փաստացի ծառայության ժամկետը լեռնահանքային արդյունաբերության մեջ հավասար է 17,2, վառելիքի արդյունաբերության ճյուղերում՝ 16,9, իսկ շինանյութերի արդյունաբերության մեջ՝ 21,5 տարվա¹⁸, Հիմնական ֆոնդերի այս մասի ամորտիզացիոն նորմաների հիմքում ընկած ծառայության նորմատիվային և այդ ֆոնդերի փաստացի ծառայության ժամկետների միջև եղած այս խզումը վերացնելու համար արդյունահանող արդյունաբերության ճյուղերում արտադրության զարգացման և ընդլայնման ներկայիս տեմպի պայմաններում, ինչպես ցույց են տալիս մեր հաշվարկները, անհրաժեշտ է մեքենաների և սարքավորումների ելքի միջին-տարեկան չափը առաջիկայում հասցնել վառելիքի արդյունաբերության մեջ միջինը 9,7%-ի (1976 թ.՝ 4,3%-ի փոխարեն), շինանյութերի արդյունաբերության մեջ՝ 12,3%-ի (1976 թ.՝ 4,1%-ի

¹⁸ Հաշվարկված է Ռ. Ս. Գրիգորյանի՝ Մեքենաների և սարքավորումների ու քիմիալ շահագործման տնտեսական սահմանները (Նրեան, 1977) գրքում հանձնարարվող մեթոդով:

փոխարեն) և այլն, այսինքն արդյունարհերության արդյունահանող ճյուղերում այն ավելացնել 2—3 անգամ, իսկ դեպքում անհրաժեշտ չլինի առաջիկայում ամեն տարի գործարկվող մեքենաների և սարքավորումների շափը (այդ խմբի ամբողջ հիմնական ֆոնդերի տարեկան ռենցած արժեքի նկատմամբ, տոկոսներով) վառելիքի արդյունարհերության ճյուղերում՝ 10,5-ից հասցնել 15,9%-ի, շինանյութերի արդյունարհերության մեջ՝ 7,5-ից 15,7%-ի և այլն:

Արդյունահանող արդյունարհերության մեջ հիմնական արտադրական ֆոնդերի, և առաջին հերթին դրանց ակտիվ մասի նորացման հանձնարարվող չափերով արագացումը և այդ ընթացքում գիտության ու տեխնիկայի նվաճումների լայնորեն օգտագործումն արտադրության արդյունահանող ճյուղերում տեխնիկական առաջընթացն արագացնելու և գրա հիման վրա ինչպես հիմնական արտադրական ֆոնդերի, այնպես էլ արտադրության արդյունավետությունը բարձրացնելու կարևորագույն ուղիներից մեկն է:

ВОСПРОИЗВОДСТВО ОСНОВНЫХ ПРОИЗВОДСТВЕННЫХ ФОНДОВ В ДОБЫВАЮЩИХ ОТРАСЛЯХ ПРОМЫШЛЕННОСТИ

БЮЗАНД СЕЛВИНАЗЯН

Резюме

Значительная часть основных производственных фондов промышленности находится в ее добывающих отраслях. Резкое увеличение в перспективе продукции этих отраслей будет обеспечено освоением как глубоких горизонтов и убогих участков уже разрабатываемых, так и новых месторождений с менее благоприятными природными (горногеологическими, климатическими и т. д.) условиями эксплуатации. В результате этого увеличится доля основных фондов этих отраслей в общей их стоимости в целом по промышленности. Увеличение продукции таким путем будет отрицательно влиять на технологическую структуру и эффективность воспроизводства основных фондов добывающей промышленности. Поэтому при обосновании способа и системы эксплуатации месторождений полезных ископаемых наряду с другими факторами следует учитывать также возможность обеспечения оптимальной технологической структуры вводимых основных производственных фондов.

В добывающих отраслях недостаточны темпы обновления активной части основных производственных фондов. Повышение общего коэффициента обновления сопровождается увеличением доли физически и морально устаревшего оборудования.

Для нивелирования создавшегося разрыва между фактическим и нормативным сроками службы действующих машин и оборудования необходимо существенно увеличить (в 1,5—2 раза) долю машин и оборудования в общей стоимости вводимых основных производственных фондов.